ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Ժողովրդական բանահյուսությունը և ուսուցման արդյունավետությունը կրտսեր դպրոցական տարիքում

Հետազոտող ուսուցիչներ՝ Արմենուհի Մարուքյան, Գայանե Զալինյան

Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան N25 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Բանահյուսություն, տեսակները 4

Հեքիաթ 6

Առասպել 10

Էպոս 11

Առակ 4

Դարձվածք 14

Շուտասելուկ 16

Սուտասելուկ 17

Հանելուկ 18

Օրհնանք 19

Օրորոցային, խնդուկ, հաշվելուկ 19

Խաղիկ-տաղիկ 20

Եզրակացություն 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած մարդու կյանքում ամենակարևոր շրջաններից մեկը կրտսեր դպրոցական տարիքն է: Հենց այստեղ են դրվում անհատականության հետագա զարգացման բոլոր հիմնական հասկացություններն ու հիմքերը: Երեխայի համար կարևոր է, որ նա ոչ միայն պաշտպանված լինի և աջակցվի, այլև ցույց տրվի, թե ուր գնալ, ինչին ձգտել: Անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդն ստեղծել է գեղարվեստական խոսքի կատարյալ նմուշներ՝ հեքիաթներ, առասպելներ, հանելուկներ, շուտասելուկներ, առածներ, ասացվածքներ, որոնք էական նշանակություն են ունեցել երեխաների բարոյական դաստիարակության ասպարեզում:

Հայ ժողովրդական բանահյուսության և ուսուցման արդյունավետության նպատակներն են.

✓աշակերտի գիտելիքի հարստացում, աշխարհայացքի ճանաչողության ընդլայնում, շփում սեփական ժողովրդի բանավոր ստեղծագործության արժեքավոր նմուշների հետ և դրանց գործնական յուրացում:

✓ժողովրդական բանահյուսության և մանկական գրականության տարաբնույթ ժանրերի ընթերցումների միջոցով սովորողների գրական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացում: ✓հանրագիտարաններից, համացանցից օգտվելու և ինքնուրույն կերպով գիտելիքներ ձեռք բերելու հմտությունների մշակում ու զարգացում:

✓երեխաների դաստիարակությունն ավելի հեշտ է իրականացնել՝ նրանց ժողովրդական աղբյուրներին ծանոթացնելու միջոցով:

Բանահյուսական նմուշների ուսուցումը նպաստում է երեխաների արժեհամակարգի ձևավորմանը, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու, գնահատելու, լավն ու վատը տարբերակելու կարողությունների մշակմանը: Բանահյուսությունը երեխայի անհատականության մեջ հոգևոր և բարոյական որակների դաստիարակության և զարգացման համար ամենաբարդ հողն է:

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ, ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բանահյուսությունը այս կամ այն ժողովրդի կերտած բանավոր ստեղծագործությունների ամբողջությունն է: Բանահյուսության մեջ ժողովուրդն արտացոլել է իր պատմության առավել կարևոր դեպքերը, դարավոր փորձն ու իմաստությունը, ձգտումներն ու իդեալները: Ըստ էության, բանահյուսությունը ժողովրդի կյանքի ու աշխարհազգացողության հայելին է: Ժողովրդական բանահյուսության երկերը ստեղծվել ու դարերով պահպանվել են բանավոր, հաղորդվելով սերնդից սերունդ:

Բանահյուսական ստեղծագործությունները ժամանակի ընթացքում փոփոխվել, զարգացել ու հարստացվել են բազմաթիվ անանուն հեղինակների կողմից և ունեն մի շարք տարբերակներ:Ժողովրդական բանահյուսությունը բաժանվում է երեք խմբի.

✓ *Արձակ/պատմողական*- հեքիաթ, առակ, ավանդություն, առասպել,

✓ *Չափածո/երգային/*- ժողովրդական խաղիկներ, օրորոցային երգեր, ժողովրդական վեպեր, վիպական, քնարական, ծիսական երգեր, ժողովրդական խաղեր,

✓ *Բանաձևային*- առած, շուտասելուկ, հանելուկ, հմայական աղոթք:

Բանաձևային

Բանաձև, լայն առումով՝ ամփոփ ձևով արտահայտված յուրաքանչյուր բնորոշում, խոսելու, արտահայտվելու ընդունված ձև, եղանակ:



Բանահյուսական յուրաքանչյուր երկ ծագումով անհատական, բնույթով կոլեկտիվ ստեղծագործություն է: Տարածվում է տեղից տեղ, ժամանակաշրջանից ժամանակաշրջան, փոխանցվում սոցիալական տարբեր խմբերի, փոփոխվում ձևով և բովանդակությամբ: Այդպես առաջանում են միևնույն երկի մի քանի տարբերակներ:

Հեքիաթ

Հեքիաթներում անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ… Հեքիաթը հարուստ ու շքեղ աշխարհ է: Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է: Նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում…

Հովհաննես Թումանյան

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ազգային հոգևոր արժեքի մի մասն է, որը սերնդեսերունդ փոխանցելով հասել է մինչև մեր օրերը: Այն ժողովրդական բանահյուսության ամենահին և ամենատարածված ստեղծագործություններից է:

Հեքիաթների միջոցով արտահայտվում են սոցիալական, բարոյախոսական բազմաթիվ կարևոր մտքեր, որոնք դաստիարակչական արժեք ունեն ոչ միայն մանուկ սերնդի, այլև բոլոր հասակի ու խավերի մարդկանց համար:

Հեքիաթներում բարու մշտական հաղթանակն է չարի, լույսի հաղթանակը խավարի նկատմամբ, կյանքի հաղթանակը մահվան նկատմամբ: Այնտեղ գովերգում են լույսի և գիտության կարևորությունը, որևէ արհեստի տիրապետելու անհրաժեշտությունը, խաղաղ և ստեղծագործ աշխատանքը, գովաբանում մարդկային նկարագրի լավագույն և ընդօրինակելի գծերը:

Հեքիաթների հեղինակը հիմնականում ժողովուրդն է: Ժողովրդի սիրտը, միտքը, փիլիսոփայությունը, հանճարը արտացոլվում են նրա ստեղծած հեքիաթների մեջ:

Հեքիաթները մարդկության երազանքներն են, հեքիաթասացները նրանք, ովքեր հավատում են կյանքի հեքիաթին ու մարդկանց վերադարձնում իրենց երազանքները: Ժողովրդական հեքիաթի լավագույն մշակումներ են կատարել Հ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Ստ. Զորյանը և այլոք:

Հեքիաթներին բնորոշ են ժողովրդական պատկերավոր արտահայտությունները, չափազանցությունները, իմաստալից խոսքերը: Այնտեղ հաճախ են իրար խառնվում իրականն ու երևակայականը: Դրանց մեծ մասին բնորոշ է նույն սկիզբը՝ «Լինում է, չի լինում», «Կար, չկար», «Ժուկով-ժամանակով», «Չգիտեմ, որ երկրում, որ թագավորությունում», «Շատ տարիներ առաջ», ինչպես նաև նույն վերջաբանը՝ «Երկնքից երեք խնձոր է ընկնում», «Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին» և այլն: Հեքիաթները բաժանվում են տեսակների և ենթատեսակների: Տարածված են.

✓իրապատում

✓հրաշապատում կամ կախարդական

✓կենդանական

✓արկածային

✓հերոսական-պատմական

✓կենցաղային-առօրեական հեքիաթները:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ շատ կարևոր դեր է կատարում հեքիաթը: Ժամանակակից կրթական համակարգի նպատակներից մեկն է՝ երեխային տալ այնպիսի կրթություն, որը նրան հնարավորություն կտա ոչ միայն լսել, այլև ձեռք բերել ինքնուրույն մտածելու և գործելու կարողություններ և հմտություններ,

անկաշկանդ արտահայտվելու հնարավորություն կընձեռնի և այդ հմտություններն ու կարողությունները կկիրառի գործնականում:

Հեքիաթները նպաստում են մանկան երևակայության խթանմանը, անհրաժեշտ է այն մատուցել այնպես, որ երեխան մտնի դրա մեջ, ինքն էլ մասնակցություն ունենա, վերարտադրի իր ձևով, բեմականացնի, որ իր համար հետաքրքիր լինի:Պետք է թույլ տալ, որ երեխան ինքնարտահայտվի, որի արդյունքում կբացահայտվի նրա ընդունակությունների ու կարողությունների սահմանները, ցանկությունները: Ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ երեխային ճիշտ ուղղություն ցույց տա, հնարավորինս ճիշտ նկարագրի այս կամ այն հերոսին, հանգամանորեն բացատրի ճիշտը և սուտը, օրինակների հիման վրա պարզաբանի չարի և բարու, վատի և լավի պայքարը: Հեքիաթը կարդալուց հետո պետք է երեխաներին թույլ տալ, որ իրենք քննարկեն, վերլուծեն և ինչու ոչ՝ բանավիճեն հերոսների լավ ու վատ լինելու շուրջ:

Ինչպե՞ս ուսուցանել, որ երեխաները սիրեն կարդալ: Ինչպե՞ս սովորեցնել երեխաներին մտածել և տրամաբանել: Այս հարցերի պատասխանները կլինեն այն ժամանակ, երբ երեխան կապրի հերոսի կյանքով, հանդես կգա հերոսի դերով, կխոսի, կմտածի ինչպես նա: Ամեն ուսուցիչ երազում է ունենալ մտածող, արձագանքող, ուշադիր երեխաներ:

Հեքիաթները գրավում են երեխաներին իրենց անսահմանափակ հնարավորություններով, բարձր բարոյականությամբ, լավատեսությամբ, արդարության զգացողությամբ և ամենակարևորը՝ բարու հաղթանակով ընդդեմ չարի: Հաճախ երեխան ոչ միայն ընդունում և լսում է հեքիաթը, այլև ինքն է ստեղծում այն և ապրում իր ստեղծած հեքիաթում: Մանկության տարիներին բոլորն էլ լսում են հեքիաթներ, հաճախ առանձնացնում իրենց համար սիրելի հեքիաթների հերոսներին, ըմբռնում են բարու և չարի հասկացողությունները:

Հեքիաթի մասին գիտելիքների ճանաչումը նպաստում է երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորմանն ու զարգացմանը: Կրտսեր տարիքում ուսուցման նպատակը երեխաներին այնպիսի կարողություններով ու հմտություններով զինելն է, որոնք կնպաստեն նրանց ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելուն: Տարբեր մարդիկ տարբեր մտավոր կարողությունների տեր են, որոշների մոտ այն բավականին զարգացած է, իսկ ոմանց մոտ ավելի թույլ,

սակայն բոլորի մոտ էլ հնարավոր է գտնել այն ուղին, որը կկարողանան նրանց տանել բարձունքներ: Պետք է ուսուցումն այնպես կազմակերպել, որ հեքիաթների ընթերցումը դառնա նոր ձեռքբերումների գործընթաց: Երեխաների մոտ տեղի է ունենում մտավոր կարողությունների զարգացում, որը նպաստում է հեքիաթների նյութի ամբողջական ընկալմանը, ինչպես նաև այն տարբեր կողմերից դիտարկելու և վերլուծահամադրական աշխատանքներ իրականացնելու հմտությունները: Կրտսեր տարիքում հեքիաթների մասին գիտելիքների հաղորդումը նախապատրաստում է հետագա ուսուցման ընթացքում խորացնելու իրենց գիտելիքներն այդ ուղղությամբ և պատրաստ լինելու նոր գրական ստեղծագործությունների՝ (վեպ, վիպակ, նորավեպ, գազել, սոնետ, տրիոլետ, կատակերգություն, դրամա) ուսումնասիրության համար:

Վերջին ժամանակաշրջանում երեխաների հոգեբանական, վարքային և այլ խնդիրներ լուծելու համար հոգեբանները հաճախ կիրառում են թերապևտիկ հեքիաթներ: Վերջիններս սովորաբար հիշեցնում են ժողովրդական կամ հայտնի հեղինակների հեքիաթներ, իսկ երբեմն էլ դրանք գրական մեծ նշանակություն չեն ունենում, քանի որ շատ ավելի պարզ են և հասարակ: Սակայն, անկախ իրենց պարզությունից և բովանդակությունից, թերապևտիկ հեքիաթները ձգտում են օգնել երեխաներին իրենց ներքին աշխարհը կարգավորելիս: Դրանց մոգական ուժը պայմանավորված է նրանով, որ երեխաների կողմից այն ընկալվում է միաժամանակ երկու մակարդակով՝ գիտակցական և ենթագիտակցական: Գիտակցական մակարդակում երեխան հաղորդակից է լինում հեքիաթային հերոսների ցավին, մտածում է, որ միևնույնն է այն իր մասին չէ, իսկ ենթագիտակցական մակարդակը ՝հավատում է՝ իր լսածին և տալիս է վարքի փոփոխման համապատասխան ծրագիր՝ վերակարգավորում է արժեքները, հայացքները և դիրքորոշումը:

Հեքիաթի որևէ ուշագրավ պահի նկարագրումը կամ հերոսներից մեկի բնութագրումը նշանակում է երևակայութամբ վերապրել հեքիաթի բովանդակությունը: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնող կարևոր հանգամանքներից է.

✓Ուսուցիչը խոսում է հեքիաթի մասին, այնուհետև երեխաների հայտնի հեքիաթներից ներկայացվում են մի քանի երկխոսություններ, որոնց միջոցով փորձում են կազմել հաղորդակցությունների սխեմաներ:

✓Առաջարկվում է կառուցել հետևյալ ձևով.

հեքիաթի հեղինակը	գործող անձի անունը	որտե՞ղ է նա գտնվում
I դրվագ	II դրվագ	III դրվագ
	հանգույցի լուծումը	

✓Ուսուցիչը պետք է օգնի երեխային, որպեսզի նրա համար տեսանելի դարձնի հեքիաթի կառուցվածքը և իրադարձությունների հաջորդական ընթացքը:

Այսպիսով՝ հեքիաթների ուսումնասիրությունը ճշտում, կոնկրետացնում է երեխաների պատկերացումները մարդկային բարոյական հատկանիշների վերաբերյալ և նպաստում դրանց արմատավորմանը:

ԱՌԱՍՊԵԼ

Առասպելը ժողովրդական բանահյուսության վիպերգական ժանրերից մեկն է, որի մեջ գերբնական ու չափազանցված ձևով արտացոլվել են հնագույն ժողովուրդների կյանքի կարևորագույն դեպքերը, աշխարհի վերաբերյալ մարդկանց պատկերացումներն ու ընկալումները: Առասպելների հիմքում, հիմնականում, ընկած են տվյալ ժողովրդի կյանքում տեղի ունեցած իրական դեպքերը, սակայն բնության դեմ դեռևս անզոր մարդն իր սնոտիապաշտ մտածողությամբ երևույթը բացատրել է որպես աստվածների ու ոգիների գերբնական ուժի արտահայտություն:

Առասպելն աստվածների, ոգիների, աստվածային հերոսների և նախնիների մասին վաղ անցյալում ստեղծված ավանդապատումն է: Այդ պատճառով էլ իրական հիմք ունեցող դեպքերի ու հերոսների պատմությունն ի սկզբանե ընդունել է չափազանցված ու գերբնական բնույթ:

Առասպել (հուն.՝ - խոսք, ասք, ավանդություն) արտահայտությունը մեր առօրյայում օգտագործվում է անհավանական, մտացածին իմաստով:

Հայկական առասպելների հարուստ գանձարանից մնացել են միայն որոշ փշուրներ: Բայց դրանք հնարավորություն են տալիս վեր հանելու հայ ժողովրդի դիցաբանական մտածողությունն ու պատկերացղումները, որոնց մեջ արտացոլվել են նրա վառ երևակայությունը, բնավորության հիմնական գծերը, ազատասիրական իղձերը և ձգտումը դեպի գեղեցիկը, լույսը, գիտությունը: Մովսես Խորենացու ՝Հայոց պատմության՝ շնորհիվ պահպանվել և մեզ են հասել հայ ժողովրդի ստեղծած՝ ՝Հայկ և Բել՝, ՝Վահագնի ծնունդը՝, ՝Տորք Անգեղը՝, ՝Արա Գեղեցիկ և Շամիրամ՝ առասպելները: Առասպելներից շատերը հետագայում ենթարկվել են գրական մշակման (Ն. Զարյանի ՝Արա Գեղեցիկ և Շամիրամ՝, Հովհ. Թումանյանի ՝Վահագնի ծնունդը՝, ՝Արտավազդը՝, Ղ. Աղայանի ՝Տորք Անգեղը՝ հայ գրականության մեջ):

Առասպելներում արտացոլվում է հայ ժողովրդի հաղթական ու ազատագրական պայքարը:

ԷՊՈՍ

Էպոսը (հին հուն. Έπος՝խոսք՝՝ասք՝՝պատմություն՝) գործածվում է երկու իմաստով:

✓Լայն առումով գրական երեք սեռերից մեկը (էպիկական, քնարական, դրամատիկական):

✓Նեղ ժանրային առումով ժողովրդական հերոսական կամ ավանդական վեպ, վիպական բանահյուսության ծավալուն և բարդ տեսակ, որը բաղադրվում է վիպական ու պատմահերոսական երկերից, ավանդություններից, զրույցներից:

Էպոսն ընդգրկուն է ու բազմաբովանդակ: Ազգային բանահյուսության լավագույն գծերի համադրությունը ամփոփված է տվյալ ժողովրդի էպոսի մեջ: Այն կոչվում է տարբեր կերպ՝ էպոպեա, հերոսական պոեմ, վիպերգություն, դյուցազնավեպ և այլն: Տարբեր ժողովուրդների էպոսների մեջ կան որոշ ընդհանրացումներ: Նախ՝ նրանք ստեղծվել են ազգային կյանքի որևէ մեծ բախտորոշ իրադարձության հիման վրա: Եվ նրանք իրենց մեջ կրում են ժողովրդի դարավոր փորձն ու իմաստնությունը, մարմնավորում են ազգային բնավորությունն ու գեղարվեստական մտածողությունը:

Բանահյուսության այս ժանրերի ուսումնասիրմամբ երեխաների մեջ սերմանվում է հայրենասիրություն և ազատասիրություն:

Էպոսին, ինչպես և հեքիաթին, բնորոշ են վիթխարի չափազանցությունները և գերբնական, հրաշապատում դրվագները:

ԱՌԱԿ

Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է: Այն այլաբանական բովանդակություն ունեցող փոքրածավալ պատմողական ստեղծագործություն է: Առակները երգիծական ստեղծագործություններ են, որտեղ երգիծանքն ունի այլաբանական բնույթ, մարդկային կյանքի թերությունները ներկայացված են անուղղակի ձևով:



Առակներում գովաբանվում ու խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, մարդկայինը և ընդհակառակը, ծաղրվում և դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը: Հնում ՝առակ՝ բառը նշանակել է խրատ, իմաստնություն: Սկզբնական շրջանում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին հիմնականում գրվել չափածո: Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից: Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի վերջում արտահայտված եզրակացությունը: Առակի վերջում հեղինակը սովորաբար դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է:

Առակները կազմված են լինում երկու կամ երեք մասից.

պատմողական	կամ	պատմողական

տրամաբանական		խրատական
բարոյախրատական/ամփոփիչ/		

Առակի կերպարներն ունեն բնավորության խտացված գծեր, որովհետև վերցված են կյանքից: Առակի հերոսը մարդն է, ու կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն: Առակի հերոսներ են.

✓կենդանական աշխարհի ներկայացուցիչները

✓բուսական աշխարհի ներկայացուցիչները

✓բնության երևույթները

✓լուսատուները

✓տիեզերական մարմինները

Առակը նման է հեքիաթի, կան կենդանիներ, որոնք խոսում են, գործում, դատողություններ անում:

Առակը նման է պատմվածքի, ունի բովանդակություն և սյուժե: Առակների ուսուցումը նպաստում են երեխաների շրջապատի դրական և բացասական հատկանիշները գնահատելու և նկատելու կարողության զարգացմանը: Առակների խրատական բնույթը պարզաբանելու, ընդգծելու և հասկանալի դարձնելու համար նպատակահարմար է երեխաներին հանձնարարել առակի հիմնական գաղափարն արտահայտող որևէ ասացվածք հորինել:

Առակների ուսուցումը նպաստում են սովորողների ճանաչողական և դաստիարակչական զարգացմանը, քանի որ օրինակով սովորելը նրանց համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը:

Առակի վարպետներ են Եզոպոսը, Իվան Կռիլովը, Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Խնկո Ապերը, Մկրտիչ Կորյունը…

ԴԱՐՁՎԱԾՔ

Դարձվածքը երկու կամ ավելի բառերի այն կայուն կապակցությունն է, որի մեջ բառերը կորցրել են իրենց հիմնական իմաստը և, փոխաբերական գործածմամբ, միասնաբար արտահայտում են մի նոր իմաստ:

Դարձվածքները ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են, դրանք խոսքին հաղորդում են արտահայտչականություն, պատկերավորություն, սեղմություն, դիպուկություն:



Երեխաների տրամաբանական մտածողության զարգացման, ինչպես նաև ուսումնական նյութերի ճիշտ ընկալման և յուրացման գործում կարևոր նշանակություն ունեն դարձվածքները: Աշակերտներին անհրաժեշտ է բացատրել , որ դարձվածքը այս կամ այն միտքն արտահայտում է ոչ թե ուղղակիորեն, այլ միջնորդավորված, այսինքն՝ այլաբանորեն: Նպատակահարմար է դարձվածքներն ուսումնասիրել նաև նրանց իմաստն արտահայտող այլ դարձվածքների զուգորդմամբ: Տարրական դասարաններում ուսուցանվող նյութերի մեծ մասը զուգորդվում են առածներով և ասացվածքներով: Սովորաբար երեխաները դժվարանում են հասկանալ և բացատրել առածների և ասացվածքների նշանակությունը: Ուստի այն պետք է ուսումնասիրել նախատեսվող այս կամ այն

նյութի հետ փոխկապակցված, որը կնպաստի ուսումնասիրվող նյութի հիմնական գաղափարի ամբողջացմանը և հեշտությամբ ընկալմանը:

Առածներն ու ասացվածքները պատկերավոր ու սեղմ ասույթներ են սոցիալական կյանքի, մարդկային բարքերի և ժողովրդական կենցաղի ամենաբազմազան երևույթների մասին: Առածներն ու ասացվածքները թե ձևով, թե ծավալով իրար շատ նման են, սակայն բնույթով շատ տարբեր են: Առածի ու ասացվածքի երեխաներին անհրաժեշտ է ցույց տալ միանգամայն գործնական կերպով, առանց տեսական բացատրությունների:

Առածը այլաբանական ստեղծագործություն է, որի բուն միտքը արտահայտված է անուղղակի կերպով:

✓Գյուղ կանգնի՝ գերան կկոտրի /եթե բոլորը միանան, կկարողանան կատարել այն, ինչ առանձին-առանձին չէին կարող անել/:

✓Ուս–ուսի որ տանք, սարեր շուռ կտանք /ովքեր միասնական են, համախմբված մի նպատակի շուրջ, միավորված, ամեն ինչ կարող են անել/:

✓Ստի ոտքերը կարճ են /չպետք է ստել, մի օր անպայման կբացահայտվի/:

Ասացվածքը այլաբանական իմաստ չունի, նրանում արտահայտված միտքն ուղիղ է ասված: Իրականությունը պատկերված է ուղղակի ձևով:

✓Ծառն իր արմատներով է ամուր, մարդն՝ իր բարեկամներով:

✓Ավելի լավ է հավատարիմ ընկեր ունենալ, քան թանկագին քար:

✓Այսօրվա գործը վաղվան չեն թողնի:

Առածների և ասացվածքների ուսումնասիրումը նպաստում է երեխաների արժեհամակարգի ձևավորմանը: Իմաստուն առածներն ու ասացվածքները նրանց օգնում են գնահատելու ինչպես իրենց, այնպես էլ ուրիշների գործողությունները:

Առածներն ու ասացվածքներն իրենց բովանդակությամբ երեխաներին հայոց լեզվի և հայերեն մտածողության գեղեցիկ օրինակներ են տալիս: Շատ մեծ է դրանց բարոյադաստիարակչական ու ճանաչողական արժեքը: Քիչ խոսքով շատ բան ասելու բացառիկ ուժ, պարզություն, կոնկրետություն, պատկերավորություն, բնութագրումների դիպուկություն, գունագեղություն, ահա ժողովրդական մանրապատումների բնորոշ առանձնահատկությունները:

Շուտասելուկները զվարճանքի համար ստեղծված, նմանահունչ բառերից կազմված, կատակային ժանրի ստեղծագործություններ են /նախադասություն, ասույթ, չափածո, երկտող/ և հորինվում են այնպես,որ արագ-արագ արտասանելու դեպքում բառերը աղավաղվում են կամ խառնվում, խճճվում, որով և զվարճություն և ծիծաղ են առաջացնում ունկնդիրների մեջ/:

Շուտասելուկները երեխաներին շատ հաճելի խոսքի փոքր միավորներ են և կարող են բառապաշարի հարստացման աղբյուր դառնալ: Շուտասելուկները կազմված են հատուկ ընտրված այնպիսի բառերից, որոնց արտասանությունը դժվար է լինում: Շուտասելուկի ուսուցման նպատակն է՝ սովորեցնել արագ և հստակ արտաբերել այն արտահայտությունը, որը միտումնավոր կառուցված է արտասանության համար դժվար կառույցով: Խաղային և մրցութային բնույթով ուսուցումն առավել գրավիչ է դարձնում շուտասելուկների ուսումնասիրումը: Այն երեխաների արտասանությունը բարելավող, առոգանությունը շտկող և զարգացնող միջոց է: Շուտասելուկները նպաստում են երեխաների խոսքի զարգացմանը, հնչյունների ճիշտ արտասանությանը, դժվար արտասանվող, իրար մոտ խմբերի հստակ, հասկանալի արտաբերելու կարողության ձևավորմանը: Շուտասելուկը պետք է սկզբում արտասանել դանդաղ և բարձր, աստիճանաբար արագացնել արտասանությունը, սակայն ցածրացնել ձայնը:

Սուտասելուկները շփոթուկներ են, որոնք ձևավորում են հումորի զգացում, սրամտություն, զարգացնում են ուշիմություն: Սրանք կատակային բնույթի, հիմնականում չափածո փոքրիկ ստեղծագործություններ են, որի մեջ գլխավոր դերում պոզով-պոչով սուտն է:





Սուտասելուկը ժողովրդական մանրապատումների մի առանձին տեսակ է, որոնք հաճախ հանդիպում են մանկական ստեղծագործություններում: Սուտասելուկները տրամաբանական աշխատանք տանելու հնարավորություն են ստեղծում, որովհետև կարդալուց բացի երեխաները պետք է ցույց տան, թե մտքի և դատողության ինչ վրիպումներ կան դրանցում:

Սուտասելուկի ուսուցումը երեխաների մոտ ձևավորում ու զարգացնում է հումորի զգացում, ստեղծագործական երևակայություն, նպաստում է խոսք կառուցելու հմտությունների ձևավորմանը: Երեխաները փոքրիկ երևակայողներ են: Ամեն առիթ կարելի է օգտագործել նրանց մղելու ստեղծագործելու, թեկուզ ստեր հորինելու, նրանց «լեզուն բանալու» և խոսքը զարգացնելու:

Սուրասելուկները իրենց սուր դիպուկ լեզվով խոսքը դարձնում են բովանդակալից ու նպատակաուղղված /մայրենիի գործող դասագրքերում դրանք չկան/.

Հանելուկը հայ բանահյուսության և գրականության հնագույն տեսակներից է, գրական մշակմամբ վկայված է V և հետագա դարերից, արձակ, չափածո մեկ կամ մի քանի տողերից կազմված սեղմ բանաձև է, մեծ մասամբ՝ հարց: Այլաբանական կարճ նկարագրություն է որևէ առարկայի կամ երևույթի, որը պետք է իմանալ, լուծել: Դրանք առարկաների և երևույթների ցայտուն, ակնհայտ հատկանիշների վառ և պարզ նկարագրությունն է:

Հորինվածքը բաղկացած է երկու միմյանց պայմանավորող մասերից՝ գուշակման ենթակա հանելուկի առարկայից և հանելուկի բանաձևից:

Հանելուկը հեռվից–հեռու ակնարկելով իր առարկայի ինչ-որ հատկանիշները, իրական առարկաներն ու երևույթները քողարկելով դառնում է մտավարժանքի, մարդկային մտավոր ունակությունների՝ հատկապես սրամտության և պատկերավոր մտածողության փորձարարական լավագույն միջոց:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից կրտսեր դպրոցականներին առավել գրավում են հանելուկները: Դրանք սրում են երեխայի միտքը, զինում են նրան շրջապատի առարկաներն ու երևույթները դիտելու, ճանաչելու դրանցից յուրաքանչյուրի առանձնահատուկ կողմերը: Հանելուկները կենդանի հետաքրքրություն են առաջացնում երեխաների մեջ՝ զարգացնելով նրանց դիտողականությունը, տրամաբանությունն ու պատկերավոր մտածողությունը: Հանելուկի շուրջ տարվող աշխատանքը պետք է հանգեցնի նրա լուծմանը: Դրա համար անհրաժեշտ է բացահայտել այդ սեղմ ստեղծագործության մեջ եղած բոլոր այլաբանություններն ու ներթաքոց կողմերը: Հանելուկներն ունեն ոչ միայն ճանաչողական, այլև դաստիարակչական արժեք: Դրանք երեխային սովորեցնում են նրբանկատություն, ուշիմություն:

Ժողովրդական մանրապատումները լեզվի ուսուցումը դարձնում են հետաքրքիր և արդյունավետ, որոնք աշակերտներին կմղեն ազգային մտածողությանը հաղորդակցվելու, իրենց խոսքը դարձնելով ավելի «համով-հոտով», դիպուկ և արտահայտիչ: Ժողովրդական իմաստության հիանալի նմուշների բառարանը պետք է դառնա սովորողների ակտիվ բառապաշարի անբաժանելի մասը:

Օրհնանքները ամենահին, ամենատարածված ճյուղերից են, որոնք ուղղված են խոսակցին: Օրհնանքները մենախոսություններ են, որտեղ խոսողը իր ցանկությունն ու մաղթանքն է ուղղում խոսակցին:

✓Ոտքդ քարին չդիպչի

✓Յոթը որդով սեղան նստես

✓Քար բռնես՝ ոսկի դառնա

Օրորոցային երգեր, օրորոցային, օրորերգ, օրոր, ժողովրդական ստեղծագործության քնարական երգատեսակ է և հայ ազգային բանահյուսության մասն է կազմում: Դրանք չնայած պարզ են, բայց զգացմունքային առումով շատ հարուստ են:

Օրորոցային երգերում գերիշխող մոտիվները /մանկանն ուղղված գովք, բարեմաղթություն…/ հաճախ զուգորդվել են երգող մոր անձնական ապրումն արտացալող մոտիվներով: Հայ ժողովրդական օրորները առանձնանում են տեղային-ոճական բնորոշությամբ: Առաջին երգը, որը լսում է ամեն ոք, դա օրորոցային երգն է:

Նանիկ արա իմ անուշ,

Ննջիր հանգիստ դու մուշ-մուշ,

Դե քնիր խաղաղ քնով,

Դեմքդ ծաղիկ ժպիտով

Թող քեզ լուսին ու աստղեր,

Բերեն հեքիաթ երազներ:

Խնդուկները ծիծաղ, խնդություն, որպես կարճ, զվարճալի, սրամիտ պատմվածք՝ ծիծաղաշարժ, արտասովոր դեպքերի մասին: Վեցամյա Արամիկը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչ է բլբլացնում մեկ տարեկան եղբայրը:

- Մայրի՛կ, իսկ դու համոզվա՞ծ ես, որ նա հայ է:

Հաշվելուկը փոքրիկների հետ բարձրաձայն ասվող ոտանավորներ են՝ նրանց հաշվել և արտասանել սովորեցնելու նպատակով: Օգտագործում են նաև մանկական խաղերում դերերը բաշխելու համար:

1-2-3 Լուսերեսին ներս բերեք,

4-5-6 Լուսերեսը հայտնվեց,

7-8 Ձեռքին ունի մի սև թութ

Սևացել են քիթ մռութ,

9-ը, 10-ը Բերեք թասը,

Քիթ մռութը լվանանք,

Լույս երեսով հիանանք:

Խաղիկ-տաղիկները չափածո հանգավորված երգային ստեղծագործություններ են: Սրանք երգվել են տարբեր խաղերի, ծեսերի, արարողությունների ժամանակ: Այս երգերի յուրահատկությունը դրանց պարզությունն է:

Նուրի- Նուրին եկել է,

Շալե շապիկ հագել է,

Կարմիր գոտիկ կապել է,

Երկնքից թոն կուզե,

Գետնեն բերք կուզե:

Եզրակացություն

Այսպիսով՝ ժողովրդական բանահյուսության ուսուցանումը կրտսեր դպրոցում ունի իր ուրույն տեղը: Այն նպաստում է երեխաների հետաքրքրասիրությանը, դասի արդյունավետ կազմակերպմանը և, որը խիստ կարևոր է, աշակերտներին կմղի ազգային մտածողությանը հաղորդակցվելու, նրանց խոսքը համեմելով դիպուկ ու

արտահայտիչ մեջբերումներով: Ինչպես Հովի. Թումանյանն է ասում, նրանով սնվում են գրեթե բոլոր արվեստները, հատկապես գեղարվեստական գրականությունը:

Բանահյուսությունն անփոխարինելի տեղ ունի դպրոցական ուսուցման համակարգում: Բանահյուսական նյութերը՝ հեքիաթներ, առասպելներ, առակներ, դյուցազներգություն, ժողովրդական խաղիկներ, հայրեններ, հանելուկներ, առած-ասացվածքներ, ցրված են գրեթե բոլոր դասարանների դպրոցական դասագրքերում: Դրանց մեջ արտացոլված են տվյալ ժողովրդի ազգային բնաբուխ յուրահատկությունները:

Բանահյուսական նյութերի ուսումնասիրման գլխավոր նպատակը ժողովրդի ստեղծագործությունների նմուշների նկատմամբ երեխաների մեջ հետաքրքրություն արթնացնելը և դրանց արտահայտած գաղափարներով առաջնորդվելու պահանջմունք ձևավորելն է: Սրանք լուրջ նշանակություն ունեն աշակերտի խոսքի, տրամաբանական մտածողության զարգացման և բառապաշարի հարստացման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս., Արնաուդյան Ա.,
՝Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում՞Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան 2001:

2. Նախաշավիղ 3-4. 2001

3. Նախաշավիղ 5. 2015

4. Սոֆյա Լալախանյան՝Հայ մանկական գրականության ուրվագծեր՝

5. Գ. Գրիգորյան՝Հայ ժողովրդական բանահյուսություն՝Երևան 1967

6. Ա.Ղանալյան՝Հայ ժողովրդական հեքիաթները՝

7. Էդ. Ջրբաշյան, Հ. Խաչատրյան «Գրականագիտական բառարան»